# Արձանագրություն N3

*ՍԲԿ-ԳՀԱՊՁԲ 19/19 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի(ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի*

*ք. Սևան* — *08 մայիսի 2019թ.*
*Ժամը՝ 13:00*

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Հրայր Խալաֆյան |
| Հանձնաժողովի բացող անդամներ՝ | Լիլիթ Պողոսյան |
| | Անի Ավագյան |
| Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ | Սարգիս Պողոսյան |
| | Սիրանուշ Գևորգյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Վարդուհի Սարգսյան |

## 1. Բանակցությունների մասին

1. Բանակցություններ վարելու նպատակով հանձնաժողովը առաջարկել է նոր գին ներկայացնել 8-րդ չափաբաժնի համար Վիոլա ՍՊԸ-ին և 18-րդ չափաբաժնի համար Մարգ ֆարմացիա ՍՊԸ-ին :

Նիստը տեղի է ունեցել «Սևանի ԲԿ» ՓԲԸ-ում գնումների բաժնում ս/թ մայիսի 8-ին ժամը 13:00-ին:
Բանակցությունների վարման ժամկետ նշանակվել է 15 րոպե:
2.Սահմանված ժամկետում բանակցությունների արդյունքում Վիոլա ՍՊԸ-ի և Մարգ ֆարմացիա ՍՊԸ-ի կողմից նոր գնային առաջարկներ չեն ստացվել:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ- 0*

**2.Ներկայացված գնային առաջարկների, ինչպես նաև կազմակերպված բանակցությունների հիման վրա հանձնաժողովը որոշեց.**

Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

| Հ/Հ | Մասնակիցը | Չափաբաժինը |
|---|---|---|
| *առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝* | | |
| 1 | Յունիմեդ Հայ-Ռուսական ՀՁ ՍՊԸ | 27 |
| 2 | Թագ Հէմ ՍՊԸ | 6.7.20 |
| 3 | Ֆարմեդուս ՍՊԸ | 15 |
| 4 | Փինք ֆլամինգո Գ ևԱ կենտրոն ՍՊԸ | 2 |
| 5 | Խաչպար ՍՊԸ | 5.12.13 |
| 6 | Վիոլա ՍՊԸ | 11 |

**3.Չկայացած չափաբաժինները հայտարարելու մասին**

«Գնումների մասին » ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն 1.3.4.9.10.14.16.17.19.21.22.23.24.25.26 չափաբաժինները հայտարարել չկայացած քանի որ գնային առաջարկ չի ներկայացվել: ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն 8.18 չափաբաժինները հայտարարել չկայացած , քանի որ առաջարկված գները գերազանցում են նախատեսված ֆինանսական միջոցները:

*Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ-0*

**4.Հարցում կատարելու մասին**

ԱԲԿ-ԳՀԱՊՁԲ 19/19 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.13-րդ կետի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ -0:

**5. Գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին**

Տանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

**6.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին**

ՄԲԿ-ԳՀԱՊՁԲ 19/19 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել մասնակիցների կողմից հրավերով սահմանված որակավորման հիմնավորման փաստաթղթերի ներկայացման օրը , ժամը 11:00-ին <<Սևանի ԲԿ>> ՓԲԸ-ի գնումների բաժնում՝ ք. Սևան , Նաիրյան 169 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ -0:

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Հրայր Խալաֆյան |
| Հանձնաժողովի բացող անդամներ՝ | Լիլիթ Պողոսյան |
| | Անի Ավագյան |
| Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ | Սարգիս Պողոսյան |
| | Սիրանուշ Գևորգյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Վարդուհի Սարգսյան |